

ՀԱՍՏԱՍՏԱԿԱՆ ՏԿՅԱԼՆԵՐ
ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱԶԶԻԻ ՏԱՐԱԾՔԻՑ

ՌՈՔԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ

Հայոց հնագույն պատմության լուսաբանումը կատարվում է պատմագիտության, հնագիտության, աղբյուրագիտության և դիպարանության տվյալները համակողմանի հետազոտությանը: Հայաստան-Ազգի տարածքի առումով հատկապես կարևորվում են Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան շրջանների հնագիտական պեղումներից ստացված տվյալները:

Հայաստան-Ազգի թագավորության պատմությունը, ըստ խեթական սեպագիր սկզբնաղբյուրների, ընթացել է մ.թ.ա. XIV-XIII դդ.: Այդ ժամանակահատվածը հնագիտորեն համընկնում է զարգացած կամ ուշ բրոնզի ժամանակաշրջանին: Մասնագետների մեծ մասը Հայաստան-Ազգի տարածքը տեղորոշում է Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան հատվածում՝ որպես կենտրոն նշելով հիմնականում Բարձր Հայքը և հարակից տարածքները¹: Ի տարբերություն Հայկական լեռնաշխարհի առավել լավ ուսումնասիրված երկրամասերի (Վանա լճի ավազանը, Խարբերդի շրջանը, Հայաստանի Հանրապետության տարածքը, Ուրմիա լճի ավազանը, պատմական Գուգարքի տարածքը)՝ լեռնաշխարհի արևմտյան և հարավային շրջանների հնագիտական ուսումնասիրության վիճակը գեոևս հեռու է բավարար լինելուց: Թեև Հայաստան-Ազգի պատմական տարածքում հնագիտական-հետախուզական աշխատանքներ կատարվել են գեոևս XX դ. 40-ական թվականներին («Թուրքական պատմական ընկերությունը»՝ Համիդ Քոչայի գլխավորությամբ), սակայն կանոնավոր պեղումներ այս տարածքում իրականացվում են սկսած 1980-ական թվականներից:

Բարձր Հայքի և շրջակա տարածքների հնագիտական պեղումները նոր լույս են սփռում Հայաստանի սլավոնական, մշակույթի և նրա քաղաքական ու տնտեսական կապերի վրա: Ներկայումս այդ տարածաշրջանում փաստագրված են հնագույն ժամանակներից մինչև միջնադար ընկած ժամանակաշրջանին վերաբերող մի շարք հնավայրեր: Այժմ հայ հնագետները հնարավորություն չունեն պեղումներ կատարել Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում, ուստի հնագիտական նորագույն տվյալները հնարավոր է օգտագործել միմիայն օտարների կողմից կատարվող աշխատանքների արդյունքների հրապարակումներից: Հայկական լեռնաշխարհի կենտրո-

¹ E. F o r r e r. Hajasa-Azzi. — "Caucasica", 1931, № 9, S. 11. ն. Ա դ ո ն ց. Հայաստանի պատմություն. Երևան, 1972, էջ 46: Г. К а п а н ц я н. Хайаса — колыбель армян. Ереван, 1947, с. 27. Ս. Երեմյան. Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը. — «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1970, № 2, էջ 30: Ա. Ք ո ս յ ա ն. Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը. Երևան, 1999, էջ 166:

նական, արևելյան և հյուսիսարևելյան մասերը, որոնք Հայաստանի պատմական աշխարհագրության տվյալների համաձայն անվանվում են Այրարատ, Գուգարք, Հայոց արևելից կողմանք (Արցախ, Ուտիք), նշված օտար գրականության մեջ հիշատակված են ընդհանրացված՝ Անդրկովկասյան և Կուր-Արաքսյան, իսկ Արևմտյան Հայաստանի տարածքի առումով սխալ՝ «Արևելյան Անատոլիա» տերմիններով²:

Ներկայիս էրզրումի մարզը, որտեղ գտնվում են Սոս, Գյուզելովա, Բյուր, Կարագ (Արծն) հնավայրերը, հնուց ի վեր հայտնի էր իր տնտեսական նշանակությամբ: Մարզի գյուղատնտեսական զարգացմանը զգալի կերպով նպաստել է գետային ցանցը: Այնտեղից են սկիզբ առնում Հայաստանի երեք խոշոր գետերը՝ Արևմտյան Եփրատը, Արաքսն ու Ճորոխը, որոնք իրենց ջրային խիտ ցանցով ոռոգման լայն հնարավորություններ են ստեղծում երկրագործության զարգացման համար: Այդ առումով առավել բարենպաստ պայմաններ ունեն էրզրումի ու Բասենի գաղտերը: Քանի որ էրզրումի մարզի տարածքը հարուստ է արոտավայրերով, բոլոր հիմքերը կային նաև անասնապահության զարգացման համար³: «Խուկկանայի պայմանագրից» երևում է, որ հայասացիները զբաղվել են երկրագործությամբ և անասնապահությամբ, քանի որ խեթական կողմն, ի դեմս Սուպպիլուլիումաս I-ի, սպառնում էր սլավոնագիրը խախտելու դեպքում ավերել և ոչնչացնել նրանց տները, դաշտերը, խաղողի այգիները, արոտները, անասունները և այլն⁴:

Կարին-էրզրումի շրջանը մասն էր կազմում Հայկական լեռնաշխարհի վաղբրոնզեդարյան մշակութային արեալի, իսկ երկաթի դարում՝ Վանի թագավորության: Այս տարածքը կապող կամուրջ էր հանդիսանում մի կողմից Արարատյան դաշտի և Գուգարքի բրոնզեդարյան զարգացած շրջանների, մյուս կողմից՝ Փոքր Ասիայի կենտրոնական շրջանների բնակավայրերի միջև: Կարին-էրզրումի շրջանում կատարված հնագիտական պեղումներն ի հայտ բերեցին մ.թ.ա. II հազ., մասնավորապես, ուշբրոնզեդարյան մշակույթի առկայությունը Հայկական լեռնաշխարհի այս հատվածում: Այս փաստը հիմնված է էրզրումի շրջանի մի շարք բլուրներից պեղված խեցեղենի ուսումնասիրության վրա, մասնավորապես, ներկայումս Բուլամաչ կոչվող բլրից, որը գտնվում է էրզրումից 30 կմ դեպի արևելք՝ Հասանկալայի մոտ: Այստեղ փաստվել է վաղբրոնզեդարից մինչև երկաթի դար ընկած ժամանակահատվածում բնակավայրի գոյությունը: Հնավայրից պեղված խեցեղենը պատրաստված է բրուտի անիվի վրա և ունի տեղական մշակույթին բնորոշ գծեր, սակայն գուրկ չէ նաև խեթական մշակույթի որոշ ազդեցությունից⁵:

² Է. Դ ա ն ի ե լ յ ա ն. Հին Հայաստանի պատմության հայեցակարգային հիմնահարցերը պատմագրության մեջ. – ՊԲՀ, 2003, № 3, էջ 30-37:

³ Ա. Մ ե լ ք ո ն յ ա ն. էրզրումի: էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն). Երևան, 1994, էջ 29-30:

⁴ J. F r i e d r i c h. Staatsverträge des Hatti Reiches in hethitischer Sprache. 2 T. – “Mitteilungen der vorderasiatisch-ägyptischen Gesellschaft”, № 34, 1 H., S. 134-136.

⁵ S. G u n e r i. Erzurum Çevresindeki Hoyuklerin Yuzey Araştırması. – “Araştırma Sonuçları Toplantısı” (այսուհետև՝ AST), 1988, № 5/2, s. 51-52.

Սոս (թուրք.՝ Sos Höyük, Սոս բլուր) հնավայր-բլուրը գտնվում է էրզրում քաղաքից 25 կմ դեպի արևելք (պատմական Վերին Բասեն դավառում): Հնավայրում պեղումները սկսվել են դեռևս 1987թ.՝ էրզրումի համալսարանի և էրզրումի թանգարանի աշխատակիցների խմբի կողմից: Այնուհետև, սկսած 1994 թ. թուրք-ավստրալիական միացյալ հնագիտական արշավախումբն Անտոնիո Աագոնայի, Կլաուդիա Սագոնայի, Հիլմի Օզկոռուսուկլուրի, Յան Մաքֆիի և այլոց մասնակցությամբ շարունակեց բնակավայրի պեղումները: Պեղումների ընթացքում հայտնաբերված նյութերը վերաբերում են տարբեր ժամանակաշրջանների՝ առնվազն մ.թ.ա. III հազ. սկսած մինչև միջնադար (XIII դ.): Սոսը բնակեցված է եղել նաև մ.թ.ա. II հազ.: Սոս հնավայրի հյուսիսային մասը ուղբրոնզեդարյան ժամանակահատվածում արտադրական կենտրոն է եղել: Այնտեղից գտնված այրված և կտրտված ոսկորների և օջախի մնացորդները հաստատում են, որ այդ մասում գտնվել է մսամթերքի մշակման կենտրոն: Սոսում գտնվել են տների և շինությունների հետքեր: Բոլոր շերտերում հայտնաբերված կառույցները բաղկացած են գավիթներից, կլոր կացարաններից ու հարակից քառանկյունի տնտեսական շինություններից, որոնց հարգախառն աղյուսե պատերը հենվում են քարե հիմնապատերի վրա: Տներն իրենց ներքին հարդարանքով նման են Հայկական լեռնաշխարհի արևելյան հատվածի նմանատիպ շինություններին, սակայն տարբերվում են նախագծի և կառուցվածքի ձևերով: Տների մոտ գտնվել են նաև հորեր՝ նախատեսված սննդամթերք պահելու համար: Սոս հնավայրից պեղվել են գերեզմաններ, որոնք համանման են Թուեղքից գտնված գերեզմաններին: Հանդուցյալների հետ գերեզմանափոսերում գտնված մ.թ.ա. II հազ. թվագրվող խեցեղենը մոլգ է և բավականին ամուր: Սոս հնավայրում հայտնաբերվել են օբսիդիանե աշխատանքային գործիքներ: Այստեղից պեղված խեցեղենը սերտ առնչություն ունի Թուեղքի խեցեղենի հետ: Դրա գերակշռող մեծամասնությունն ունի սև, փայլեցված մակերես և գունավոր, սովորաբար կարմրավուն ներքին մաս, երբեմն հանդիպում են դորշ, վարդագույն և մոխրագույն մակերես ունեցող ամաններ: Դրանք բոլորն էլ պատրաստված են ձեռքով և լավ թրծված են հնոցներում: Գտնվել են լայնափոր սափորներ, որոնք ունեն նաև «նախիջևանյան» տիպի բռնակներ: Խեցեղենի վրա արված նախազարգերը հիմնականում անոթների վերին մասում են: Սոսի խեցեղենը սերտորեն առնչվում է նաև Բլուրի և Գյուզելուվայի խեցեղենի հետ⁶:

էրզրումից 16 կմ դեպի հյուսիս-արևմուտք գտնվում է նշանավոր Կարազ (Karaz) հնագիտական վայրը: Կարազը (Ղարարզ, Կար Արծն) գտնվում է հին Հայոց Արծն քաղաքի մոտ: Այստեղ պեղումներ իրակա-

⁶ S. Güneri. Նշվ. աշխ., էջ 58–59; A. Sagona, C. Sagona, H. Özkörücüklü. Excavations at Sos Hoyük 1994.– “Anatolian Studies” (այսուհետև՝ AS), 1995, № 45, p. 193-218. Excavations at Sos Hoyük 1994.– “Kazi Sonuçları Toplantısı” (այսուհետև՝ KST), 1995, № XVII, № 1, p. 151-155; A. Sagona, M. Erkmen, C. Sagona. Excavations at Sos Hoyük, 1995.– AS, 1996, № 46, p. 27-52. Excavations at Sos Hoyük, 1997.– KST, 1998, № XX, I, p. 205-206. A. Sagona, C. Sagona. Excavations at Sos Hoyük, 1998 to 2000.– “Ancient Near Eastern Studies”, 2000, № 37, p. 66-68.

նացվել են դեռևս XX դ. 40-ական թվականներին: 1942 թ. Հ. Քոչալը և նրա օգնական Ք. Թուրֆանը կատարել են փորձնական պեղումներ, այնուհետև դրանք շարունակվել են 1944 թ.: Կարագի համալիրում գտնվել են նյութեր, որոնք վերաբերում են էնեոլիթից մինչև միջնադար ընկած ժամանակաշրջանին: Կարագից հայտնաբերվել են կավե կլոր անոթներ, լայնաբերան սափորներ, ձեռքի ապարանջան, կավե օջախներ և այլն: Խեցեղենը հիմնականում տեղական է՝ բնորոշ զարգանախշերով: Հայտնաբերվել են մեծ քանակությամբ օբսիդիանե աշխատանքային գործիքներ: Այսպես կոչված «Կարագի մշակույթը» նույնպես սերտ առնչություն ունի Հայկական լեռնաշխարհի արևելյան մասի մշակույթի հետ⁷: Ըստ Ք. Քյոքթեների կողմից Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան շրջաններում իրականացված հետազոտությունների արդյունքների՝ Կարագի նյութական մշակույթի ոճը առկա է Բաբերդի և Երզնկայի շրջաններում, այն նաև իր արեալի մեջ էր ընդգրկել Երզնկայից հյուսիս գտնվող Բլուր (Թուրք. Pulur Hoyük) հնավայրը, դրա ազդեցությունը նկատելի է նաև Վանա լճի ավազանում⁸:

Հայտնի հնավայրերից է նաև Pulur-ը (Հայկական՝ Բլուրը): Այն գտնվում է էրզրումից 20 կմ արևմուտք: Այս հնավայրում նույնպես ուսումնասիրություններ կատարվել են XX դ. 40-ական թվականներին⁹: Բլուրում գտնվել են մ.թ.ա. II հազ. դամբարաններ: Այդ դամբարաններից հայտնաբերվել է մեծ քանակությամբ խեցեղեն: Բլուրում գտնվել են երեք գերեզմաններ՝ 2 մ երկարությամբ: Մահացածների դիակները փաթաթված են եղել շորի մեջ: Թաղվածներից մեկը (II գերազման) ծեր կին է, որի հետ հայտնաբերվել են արծաթե կրծքազարդ, հինգ բրոնզե ասեղներ և երկու բրոնզե ապարանջաններ: Կարևոր է շեշտել, որ երկու գերեզմաններում գտնված բրոնզե նեաասայրերը շատ համանման օրինակներ ունեն Թռեղքի համաժամանակյա գտածոների մեջ: Պեղված բրոնզե նյութերը թվագրվում են մ.թ.ա. XIII դ. վերջ և XII դ. սկիզբ, իսկ գերեզմանափոսերում դասված կավանոթների մի մասը՝ մ.թ.ա. XIV և XIII դդ.: Թաղման արարողությունների ժամանակ ընտանի կենդանիներ են զոհաբերվել, և նրանց մնացորդները դրվել են գերեզմանափոսերում¹⁰: Նմանատիպ թաղումները փաստում են, որ մեր նախնիները հավատացել են անդրշիրիմյան կյանքի

⁷ W. L a m b. The Culture of North-East Anatolia and its Neighbours.- AS, 1954, № 4, p. 21-32; H. K o ş a y, K. T u r f a n. Erzurum-Karaz Kazisi raporu.- Belleten, 1959, № XXIII, s. 349-415; S. G ü n e r i. Doğu Anadolu'da Yeni Gözlemler.- "Turk Arkeoloji Dergisi" (այսուհետև՝ TAD), 1992, № XXX, s. 152-158.

⁸ W. L a m b. Նշվ. աշխ.:

⁹ K. K ö k t e n. Orta, Doğu ve Kuzey Anadolu'da yapılan tarih öncesi araştırmaları.- Belleten, 1945, № VIII/32, s. 659-680; Kuzey-Doğu Anadolu Prehistoryasında Bayburt Çevresinin Yeri. Die Bedeutung des Umgebung von Bayburt Innerhalb der Vorgeschichte Nordost-Anatoliens. Ankara Üniversitesi Dil ve Tarih-Coğrafya Fakültesi Dergisi, 1945, № III/5, s. 464-505; H. K o ş a y. Pulur ve Güzelova (Erzurum Araştırmaları).- «Turk Tarih Kurumu Yayınlarından» (այսուհետև՝ TTKY), 1964, № XVII, № 1, s. 91-94. S. G ü n e r i. Erzurum Çevresindeki Hoyuklerin.... s. 45-76. Ն ու յ ն ի՝ Doğu Anadolu'da Yeni Gözlemler.- TAD, 1992, № XXX, s. 153-158.

¹⁰ H. K o ş a y, H. V a r y. Die Ausgrabungen von Pulur: Bericht über die Kampagne von 1960. Ankara, 1964, Turk Tarih Kurumu.

գոյությանը և այդ պատճառով էլ դամբարանների մեջ աճյունի հետ միասին տեղավորել են կերակուր ու տնային սպասքի առարկաներ, զենքեր և աշխատանքի գործիքներ, զարդեր, սպանված անասունների ամբողջական մարմիններ, որոնք պետք է շարունակեին ծառայել ավրոջը հանդերձյալ կյանքում:

Ներկայումս Գյուզելովա (Güzelova՝ Գեղեցիկ դաշտ) կոչվող բազմաշերտ հուշարձանը գտնվում է էրզրումից 15 կմ հյուսիս-արևելք: Այստեղ պեղումներ կատարվել են 1961 թ.: Պեղումներից ստացված նյութը վերաբերում է էնեոլիթից մինչ միջնադար ընկած ժամանակահատվածին: Գտնվել են մեծ քանակությամբ խեցեղեն, ոսկրե, օբսիդիանե և փայտե իրեր: Այս բնակավայրը ևս բնակեցված է եղել մ.թ.ա. II հազ.¹¹:

Բլուրի դամբարաններից ձեռք բերված անոթները Կարազից, Գյուզելովայից գտնված անոթների հետ մշակութային մի շղթա են կազմում: Մյուս կողմից Բլուրի, Գյուզելովայի անոթների ձևերը նույնպես սերտ առնչություն ունեն Հայկական լեռնաշխարհի արևելյան մասի նույնատիպ խեցեղենի հետ: Բլուրից գտնված բրոնզե նետասլաքները շատ զուգահեռներ ունեն Թոեղքի նետասլաքների հետ: Այդ նմուշները թվագրվում են մ.թ.ա. XIV-XII դդ.: Զուգահեռներ կան նաև Հայկական լեռնաշխարհի արևելյան մասի և Կարազից, Բլուրից գտնված ծայրակալների, դաշույնների, բրոնզե ապարանջանների, ուլունքների միջև: Բլուրի առավել կատարելագործված բրոնզե ապարանջանները և ուլունքները կարելի է նկատել վանա թագավորության նույնատիպ օրինակներում¹²:

Հայկական լեռնաշխարհի մյուս շրջանները, որոնք կարևոր են Հայաստան-Ազգիկի պատմության ուսումնասիրության համար, Ճորոխ ու Գայլ գետերի հովիտներն են: Այստեղ է Բյույուքթեպե (Büyüktepe Hoyük՝ Մեծ դադաթ) կոչվող հնավայրը՝ Բաբերդից 30 կմ հարավ-արևմուտք: Այն Բաբերդի գաղտնի է պատմական Սպեր գավառում: Այս հնավայրը հայտնագործվել է 1988 թ. Մելրոուսի համալսարանի արշավախմբի կողմից, որը կանոնավոր պեղումներ սկսել է 1990 թ.: Բյույուքթեպեի մ.թ.ա. II հազ. խեցեղենը նույնպես մոզ է պատրաստված բրոնտի անիվի վրա, փայլեցված, զարդանախշերով ու նույնպես առնչվում է Հայկական լեռնաշխարհի արևելյան մասի մշակութային ձևերին¹³:

1980-ական թվականների վերջում Գյումուշլուսանի մարզի Բաբերդի և Կելկիլի շրջաններում (Ճորոխ և Գայլ գետերի հովիտներ) սկսված հնագիտական աշխատանքներն ի հայտ բերեցին բավարարիչ հնավայրեր¹⁴: Ուսումնասիրվել են 60-ից ավելի հնավայրեր, ներառյալ նաև հնագետ Ք. Քյոքթեպեի կողմից հիշատակված 5 վայրերը Բաբերդի շրջանում, որտեղ

¹¹ H. K o ş a y, H. V a r y. Güzelova Kazisi. Ausgrabungen von Güzelova. Ankara. 1967; H. K o ş a y. Pulur ve Güzelova (Erzurum Araştırmaları).– TTKY, 1964, № XVII, № I, s. 91-94; S. G ü n e r i. Doğu Anadolu'da Yeni Gözlemler. s. 153-158.

¹² S. G ü n e r i. – TAD, 1992, № XXX, s. 154-155.

¹³ A. S a g o n a, E. P e m b e r t o n, I. Mcphee. Excavations at Büyüktepe Höyük, 1992.– AS, 1993, № 43, p. 69-83. Büyüktepe Hoyük 1993 Activities.– KST, 1994, № XVI, I, p. 161-164.

¹⁴ A. S a g o n a. An Archaeological Survey of the Bayburt and Kelkit Regions, North-Eastern Anatolia: Pre-classical period.– AST, 1989, № 7, p. 425-433.

նա եղել էր 1940 թ. իր հետազոտական արշավանքի ժամանակ¹⁵: Միջին չափսի 12 հնավայր-բլուրների մեջ են նաև Tepecik (Փոքր կատար, որի մասին գեկուցել է Ք. Քյոքթենը՝ որպես Siptoros՝ Սուրբ Թորոս հայկական բնակավայրի անվան աղավաղված ձևը¹⁶), Kitre, Gundulak, Բլուր (Pulür Tepe) և այլ առավել լավ ուսումնասիրման կարոտ մի շարք հնավայրեր: Մեծ բլուրներ են Sogutlü-ն (գեկուցված Ք. Քյոքթենի կողմից Հինգի անվամբ), Բլուրը՝ Gokçedere գյուղում, Karakilise Tepe-ն (Սև եկեղեցի գագաթ), Çorak Hoyük (Զորակ հայկական բնակավայրի աղավաղված անվանումը¹⁷), Cengiler Tepesi-ն (Ցանքի լեռ), Buyük Tepe-ն՝ առանձնացված Kuçuk Tepe-ից թամբարդով, Kilise Tepe-ն (Վանքի գագաթ) և այլն¹⁸:

Բաբերգի, Կելկիթի շրջանները, որոնք հարմար էին անասնապահության և հողագործության զարգացման համար, Հայաստանի սահմանային տարածքներից էին, հյուսիս-արևմուտքում սահմանակից էին Կասկա երկրին, իսկ արևմուտքում՝ խեթական Վերին երկրին: Այս տարածքի հնավայրերի հետագա պեղումները նոր լույս կսփռեն Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան մասի պատմության վրա:

Բաբերգի շրջանում հետազոտությունները շարունակվեցին նաև XX դ. 90-ական թվականների սկզբին Buyuktepe Höyük-ի պեղումների հետ գուգահեռ¹⁹: Բաբերգի, Կելկիթի և էրզրումի շրջանների հնավայրերից հայտնաբերված հնագիտական նյութերի մի մասը վերաբերում է ուշ բրոնզի ժամանակաշրջանին, և գրանք կարելի է համարել Հայաստանի նյութական մշակույթի իրենց փաստեր: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, ներկայիս էրզրումի, Գյումուշխանեի մարզերի տարածքը (Մեծ Հայքի Բարձր Հայք, Տայք նահանգների տարածքի մի մասը, Տուրուբերան նահանգի հյուսիսային գավառները, Այրարատի արևմտյան գավառները ու Փոքր Հայքի հյուսիսարևելյան մասը), որտեղ գտնվում են վերը նշված հնավայրերը, ուշ բրոնզեդարում մասն էր կազմում մշակութային այն ընդարձակ տարածքի, որն ընդհանուր առմամբ զբաղեցնում էր ներկայիս Վրաստանի, Սերաստիայի շրջանի, Կասպից ծովի և Ուրմիա լճի միջև ընկած տարածքը²⁰, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհը:

Խնդրո առարկա տարածքում կատարվող հնագիտական պեղումների արդյունքում վերհանված ուշբրոնզեդարյան մշակույթը ստեղծվել է Հայաստան-Ազգի ժամանակաշրջանում և կարևոր նշանակություն ունի քաղաքական այդ միավորի մշակույթի առանձնահատկությունները և ընդհան-

¹⁵ K. K ö k t e n. Kuzey-Doğu Anadolu Prehistoryasında Bayburt çevresinin yeri.– Ankara Üniversitesi Dil ve Tarih-Coğrafya Fakültesi Dergisi, 1945, № III/5, s. 479-486, 498-505.

¹⁶ Ա. Մ ե լ ք ո ն յ ա ն. Նշվ. աշխ., էջ 161:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ A. S a g o n a. – AST, 1989, № 7, p. 425-433.

¹⁹ A. S a g o n a. Bayburt Survey 1990.– AST, 1991, № 9, p. 397-403. Bayburt Survey 1991.– AST, 1992, № 10, p. 261-268.

²⁰ A. Ö z f i r a t. Research on the Cultures of East Anatolia in the 2nd Millennium BC. Istanbul University's Contributions to Archaeology in Turkey (1932-2000). Istanbul, 2001, p. 326: T. Ö z g ü ç. Early Anatolian Archaeology in the Light of Recent Research.– "Anatolia". 1963, № 7, p. 7.

ընթացումները Հայկական լեռնաշխարհի մյուս տարածաշրջանների հետ
չադկապված ուսումնասիրելու համար:

АРХЕОЛОГИЧЕСКИЕ ДАННЫЕ
ИЗ ИСТОРИЧЕСКОЙ ТЕРРИТОРИИ ХАЙАСА-АЗЗИ

ՐՕԲԵՐՏ ԿԱԶԱՐՅԱՆ

Р е з ю м е

В статье рассмотрены результаты археологических исследований, проведенных на территории Хайаса-Аззи. История государства Хайаса-Аззи, согласно данным хеттских клинописных источников, протекала в XIV-XIII веках до н.э. Археологически этот период времени совпадает с эпохой поздней бронзы. Большинство историков локализует Хайаса-Аззи в северо-западной части Армянского нагорья, отмечая в качестве центра в основном Высокую Армению и прилегающие территории. В настоящее время в этом регионе находятся несколько археологических мест: Сос, Караз, Блур, Гюзелова, Бююктепе и др. Часть материалов, обнаруженных из этих археологических мест, относится к позднему бронзовому периоду и их можно считать материальными фактами культуры Хайасы. Выявленная в результате археологических раскопок в данной территории позднебронзовая культура возникла в период Хайаса-Аззи и имеет важное значение для изучения особенностей культуры этой политической единицы.

ARCHAEOLOGICAL DATA
FROM THE HISTORICAL TERRITORY OF HAYASA-AZZI

ROBERT GHAZARYAN

S u m m a r y

The paper deals with the researches carried out in the historical territory of Hayasa-Azzi. The history of the Hayasa-Azzi kingdom, according to Hittite cuneiform sources, lasted in the 14th-13th centuries B.C. This period archaeologically coincides with the Late Bronze Age. Most of the historians locate Hayasa-Azzi in the north-west of the Armenian Highland with the centre placed in Upper Armenia and the adjacent territories. At present there are a number of archaeological sites in this region - Sos, Karaz, Blur, Güzelova, Büyüktepe, etc. Part of the materials excavated from these archaeological sites refer to the Late Bronze Age, and can be considered the evidence of the material culture of Hayasa-Azzi. The Late Bronze Age culture brought out as a result of the excavations carried out in the territory under discussion was formed during the period of Hayasa-Azzi and plays a great role in the joint research of the cultural peculiarities of this political unit.